

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ» 1893 թ. ՆՈՒՐԵԼ ԷԻՆ՝ Տիկ. Մարիամ Թուհանեանց—Քարևան-  
սարա գիւղի հայոց ուսումնարանին. Ալ. Մեղիք-Ազարեանց—  
Ռաշտի հայոց ընթերցարանին. եղբ. Յովհ. և Աբր. Բունիա-  
թեաններ—Չաքաթալի հայոց եկ. ծխական ուսումնարա-  
նին. տիկ. Հեղինէ Կրասիլնիկեանց—Հաց գիւղի հայոց ծխակ.  
ուսումնարանին. Յարութիւն Թամազեանց—Ղզլարի հայոց  
արական դպրոցին. Սող. Մուրինով—Ժընեւի հայոց ուսանող.  
գրադարանին. տիկին Նունէ Ֆարեմուզեան—Պետեգորսկի  
հայոց ուսումնարաններին. Ստ. Մանուէլեանց—Նոր-Բալաղէզի  
պահեստի գնդին Երեանում. Նառնեակ Ոսկանեանց—Աս-  
տարաբաղի հայոց ծխ. դպրոցին. եղբ. Ժամհարեաններ—  
Շուշուէ Հայոց Բարեգ. Ընկ. գրադարանին.

Խմբագրութեան կողմից նւեր ուղարկած է ներկայ 1893  
թւականին՝ Ռուշչուկ Բուզարիայում—Հայոց գրադարանին,  
Յընա—ծխ. դպրոցին, Արդահան—Հայոց ընթերցարանին,  
Մոնպելիէ Ֆրանսիայում—հայկական գրադարանին, Ղարս  
Հայոց ծխակ. դպրոցին, Արդաբիլ—Հայոց ընթերցարանին,  
Սալմաստ—Հայոց դպրոցի գրադարանին, Չալալօղլի—  
Հայոց ծխ. դպրոցին, Լաչպիգ Գերմանիայում—Հայոց ճե-  
մարանական Ընկերութեան:

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐԶԵԱՆՅ Վեհափառ Կաթողիկոսից նշա-  
նակած է առաջնորդ Պարսից Ատրպատական թեմի, փոխա-  
նակ նորօք հանգուցեալ Գրիգորիս արքեպ. Աղւանեանի Նոր  
առաջնորդը արդէն ուղորուց իւր պաշտօնատեղին:

ՆՈՐ ՅԱՋՈՐԳՆԵՐ՝ Վեհափառ Կաթողիկոսը նշանակել է չաջորդութեան  
պաշտօնում Սահակ վարդապետ Շախեանցին՝ Ալէքսանդրապոլ,  
Գարեգին վարդապետ Սաթուհեանցին՝ Գանձակ, Նիլիէ վար-  
դապետ Մուրատեանցին՝ Գորի, Նիրեմ վարդապետ Սուքիաս-  
եանցին՝ վանահայր ս. Խաչ վանքում (Նոր-Նախիջևանի մօտ),

Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեանին՝ չաջորդ Նոր-Նախի-  
ջեանի։  
«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԷ. «Մուրճ»-ի ընթեր-  
ցողները վշտով կը լինեն, որ Նորին Վեհափառութիւն կաթո-  
ղիկոսը, ունկնդրութեան ընդունելով «Մուրճ»-ի խմբագրութիւնը  
աշխատակիցներով հանդերձ՝ ի միջի ալոց չալտնեց որ 1894 թ.  
չունւարից Նա մտադիր է «Արարատ» ամսագիրը վերափոխել  
Այժմ ալդ մտադրութիւնը հաստատուեալ է նրանով, որ «Արա-  
րատ» ի խմբագրութիւնը նոր կազմ է ստացել. նախագահ նշա-  
նակած է Խորէն ծ. վ. Ստեփանէ, անդամներ խմբագրութեան՝  
Մեսրոբ վ. Տէր-Մովսէսեան, Ղևոնդ սարկաւազ Գանջեցեան,  
Արշակ Տէր-Միքելեան, Նիկ. Տէր Աւետիքեան, Նիկիչ Մադա-  
թեան և պ. Խորէն Խրիմեան։

ԳԷՈՐԳ ԵՊ. ՍՈՒՐԷՆՆԱՆՑ հրամանով Նորին Վեհափառութեան ժամա-  
նել է Թիֆլիս, նշանակած լինելով իբր կառավարիչ թեմի,  
մինչև առաջնորդութեան պաշտօնում հաստատուելը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ — Թեհրանում 1894 թւականից սկը-  
սած հրատարակուելու է «Շաւիղ» անունով ազգային, գրական-  
նական և քաղաքական մի շաբաթաթերթ, որի արտօնատէր-  
հրատարակիչն է Ա. Իէկ-Նաղարեանց։

«Շաւիղ» շաբաթաթերթի կոչման մասին նրա խմբագրու-  
թիւնը մի առանձին թղթով լայտարարում է հետևեալը.

«Պէտք է ամեն կերպ աշխատենք տալ մեր համեստ հրա-  
տարակութեան աչն ձևը, որը, ըստ իւր մտքի և նշանակու-  
թեան, դուրս լինի, իբրև պատանդան, ապագայ աւելի մի  
լուրջ օրգանի։ Այս տեսակ մի հրատարակութեան պահանջը  
պարսկահայերը վաղուց է որ զգում են. մենք չանձն առանք  
տանել ալ ծանր լուծը—հրատարակել մի ալըպիսի օրգան, որ  
կարողանայ ծառայել պարսկահայ հասարակութեան, իբրև ար-  
ձագանք նորա առօրեայ կեանքի շահերին իւր բազմակողմանի  
երևութիւններով»։

«Շաւիղ» շաբաթաթերթի ծրագիրը այս է.

1) Առաջնորդող լօղածներ առաւելապէս պարսկահայ  
հասարակական կեանքին վերաբերեալ։

2) Ներքին տեսութիւն.—Թղթակցութիւններ և Ներքին  
լուրեր։

3) Արտաքին տեսութիւն.—Թղթակցութիւններ Արտա-  
սահմանից, Բաղաքական բաժին և Արտաքին լուրեր։

4) Մատենախօսութիւն։

- 5) Խառն լուրեր:
- 6) Բանասիրական:
- 7) Հեռագիրներ Ռէչտէրի գործակալութիւնից:
- 8) Յայտարարութիւններ ամեն լեզուներով:

Ծանօթութիւն: «Շաւիղը» կ'ունենայ իւր առանձին առևտրական բաժինը:

«Շաւիղ»-ը կը հրատարակուի Թէհրանում, կիրակի օրերը, տարեկան 50 համար, առաջժամ փոքր դիրքով:

Բաժանորդագրինն է Պարսկաստանում տարեկան 1 թուման, կէս տարւանը՝ 6 դրան, առանձին համարները՝ 5 շահի:

Արտասահմանում՝ տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարւանը 5 ֆր. կամ 2 ռուբլի:

Ռուսաստանում բաժանորդագրութիւնը կ'ընդունուի՝ Թիֆլիս, Արշակ Նազիբեանցի մօտ, Խիդեկէլի գրավաճառանոցում:

«Շաւիղ»-ի հասցէն՝ Téhéran, Perse. Rédaction du journal arménien «Chavigh».

Ցանկանում ենք չաջողութիւն Պարսկաստանի այս անդրանիկ հալկական օրգանին, ենթադրելով որ նա կը ջանալ իրան տալ համակրելի ուղղութիւն և կ'աշխատէ ոչ միայն պատրաստի ընթերցող շրջանի ուշադրութիւնը գրաւել, այլ և աւելի խոր խաւերը թափանցել:

ՎՐԱՑ ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ, Յունարից 1894 թ. սկսելու է Թիֆլիսում հրատարակել վրացերէն մի ամսագիր «Մոսմէ» (սուրհանդակ) անունով:

ԹԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ, «Մուրճ»-ի անցեալ համարում (տես Ժամանակակից Տեսութիւն) մենք այն կարծքն էինք չափնել թէ Երևանեան նահանգում և Կարսի շրջանում տիրող հացի պակասութեան և մեծ թանկութեան հետևանքների դէմն առնելու համար՝ սկսք է դիմել կառավարութեան օգնութեանը, ինչպէս այդ եղաւ 1891—92-ին Ռուսաստանի ներքին նահանգների համար: Մամուլի մէջ, որքան մեղ չափնի է, միայն «Մուրճն» էր այդ կարծիքը չափնել: Նույն խնդրի առիթով Կալսերական Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան 14-ն ղեկտ. կապցած ընդհանուր ժողովում՝ կապցաւ վճիռ, որով ընկերութիւնը միաձայն ընդունեց անբերրութեան իրողութիւնը և անհրաժեշտութիւնը՝ անմիջապէս օգնութեան զարու, և վճռեց, ներկայացնելով ունեցած տեղեկութիւնները, խնդրել երկրիս պ. կառավարչապետին միջամտել բարձրագոյն կառավարութեան առաջ՝ մեասա՛ծ աղարնակութեանը օգնելու համար:

ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԹԷ ՏԳԻՏՈՒԹԻՒՆ: Հալաստանեաց եկեղեցիին մի առանձին դժբաղդութիւն է ունեցել, որ ալ և ալ խաւարամիտ մարդիկ աշխատում են անցեալի պէս նաև ալժմ իրանց բարոյական ոչնչութիւնը ծածկել ալ եկեղեցու անունով: Նոյն դժբաղդութիւնը ունեցել է Գիտութիւնը, որի անունի տակ շատերն են աշխատում ծածկել իրանց մտաւոր ոչնչութիւնը: Լուրջ մամուլի պարտքն է ալ բարոյական և մտաւոր ոչնչութիւններին իրանց տեղը ցոյց տալ և թող չտալ որ դժբազարկ վաստակէն ժողովրդի և հասարակութեան մէջ: Եւ անհատները պէս՝ նաև օրդաններ կան, որոնք միանգամայն աշխարհ գործում են մանաւանդ եկեղեցու հեղինակութեան տակ, բայց ոչ համոզմունքով, ալ զանազան շեղումներով: Ալ իսկ իւր պատմութիւնն ունի մեր նոր գրականութեան մէջ, սկսած վաթսուական թակահաններէ, բայց որ աւելի ևս ցաւալի է՝ ալ իսկ մինչ օրս էլ դեռ հիմք է ծառայում հրապարակախօսութեան ի մեծ ամօթ մեր ազգի համար: Որովհետև եթէ ընթերցող հասարակութիւնը ինքը խրախոս չտալ ալ դանին — ինչ կը համարձակէին նոքա ալ պարսի խաղեր խաղալ նորա նւիրական զգացումները հետ:

Ինչու՞ն է բանը:

Մենք տպել էինք «Մուրճ»-ում մի լուրձ, որի մէջ, ընդդէմ մի հեղինակի, պնդում էր թէ «Մեր եկեղեցին եղել է մինչև Բաղկերչոնի ժողովը կաթողիկէ մալր եկեղեցու մի ճիւղը: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն եղել է մի կաթողիկ (որ նոյնն է թէ ընդհանրական եկեղեցու) վարդապետ, որը մեր ազգային եկեղեցու հիմքը դարձաւ: Նա ընդունել և քարոզել է սուրբ Աւետարանի հետ միասին նաև կաթողիկ (այսինքն ընդհանրական կամ կաթողիկէ) եկեղեցու դոգման և աւանդութիւնը: Այսօր իսկ մենք դաւանում ենք Հաւատամքի մէջ մի կաթողիկէ (ընդհանրական), առաքելական սուրբ եկեղեցի: Մեր եկեղեցու պետը ևս կոչում է կաթողիկոս (ընդհանրական եկեղեցու հովիւ, գլուխ): Իսկ երբ Բաղկերչոնի ժողովը 451 թիւն նախկին երեք ժողովներին հակառակ ելք ունեցաւ, ինչպէս ալ զարդէն հաստատ Ֆակտ է, մեր եկեղեցին միայն հաստատ և հաւատարիմ նախկին եկեղեցու աւանդութեանցը և դաւանանքին»:

Ակներև է, որ այստեղ մենք գործ ունենք մի զուտ պատմական խնդրի հետ: «Նոր. Գար»-ը, և դորան հետեւելով «Արձագանք»-ը աշխատում են ալ հալեացքից խնդիր չլինել:

«Արձագանք»-ը մինչև անգամ անձրան հեռուն է դնում, որ իւր Մոսկուայի աշխատակից Մ. Շովրեանի բերանով զարմացք է չափնում որ «այս խօսքերը ազատամիտ պ. Արասխանեանցը... անվիհեր քաջութեամբ տպում է իւր «Մուրճ»-ի էջերում: Ուրեմն... ուրեմն «Արասխանեանցը լանցատը է կրօնի դէմ»:

Այդ անձերը շատ շուտ են եզրակացութիւններ անում: Պ. Դազբաչեանի վերը առաջ բերած հալեացքը վերաբերում է ոչ թէ լուսատրչական կրօնին, այլ այդ կրօնի պատմութեանը: Կրօնը հաւատի գործ է, պատմութիւնը՝ հետազոտութեան: Պատմութիւնը ենթադրում է ազատ հետազոտութիւն, ալլապէս պատմութիւնը պատմութիւն չէ: Ալսօրևազ օրս ոչ միայն ազատօրէն հետազոտում է եկեղեցական պատմութիւնը, այլ և նոյն իսկ Աւետարանի պատմութիւնը, ալսինքն նորա աղբիւրները, և դորա համար Եւրոպայում հաստատւած են բազմաթիւ համալսարանական ամբիոններ, ուր լաճախում են մեր ապագա վարդապետներից շատերը: Չհասկանալ զանազանութիւնը կրօնի և պատմութեան մէջ—ներելի է տղէտներին. դուրս գալ այդ տգիտութիւնը ցոյց տալու մի լրագրում—նոյն իսկ անխոհեմութիւն է. իսկ դորա համար դեռ ասել թէ «Մուրճ»-ը ալստեհտե աւելորդ է մեզ (ալսինքն Շովրեանի և նմանների) համար—այդ ցոյց է տալիս ոգու մի ողորմելիութիւն, որը միայն չափազանց սահմանափակ գլուխների առանձնաշնորհումն է... Ձեր լտեղը «Արձագանք»-ումն է, որի շնորհքները բարով վալելէք:

«ԱՐՁԱԳԱՆՔ»-Ը, հինգ տարի շարունակ խոշորացոյցը աչքին որոնում է «Մուրճ»-ի մէջ մի բան, որով կարողանալ «Մուրճ»-ի դէմ առաջնորդողով դուրս գալ: Նա ալժմ (տես «Արձագանք» № 150) չափնում է թէ մի բան գտել է. և այդ մի բանն էլ անպիտի մի խօսք է, որը, իրա ասելով, նա կը կամենար ծածկել, և որպէս զի ծածկելը չաջողւի—ամբողջ առաջնորդող է նւիրում այդ մի բառին, մի խօսքին: Եւ իւր «պարկեշտութիւնը» ցոյց տալու համար նա ուրախութիւն է չափնում, եթէ իւր ընթերցողների մեծամասնութիւնը չհասկանալ այդ բառի, հետեապէս և «Արձագանք»-ի» այդ ամբողջ առաջնորդողի իմաստը....

Այդպէս են բռնւում սուտ պարկեշտները:

Գալով ալժմ պախարակած բառին, որ «Արձագանք»-ը գտել է պ. Աղալեանցի «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» խորագրով գրւածքի մէջ, մենք առաջին անգամ «Արձագանք»-իցն»

ենք իմանում թէ արդ խօսքը պախարակելի, աչպէս ասած՝ հակա-ցենդոլորական խօսք է: Գուցէ և ճիշտ էլ է «Արձագանքի» հասկացածը, բայց արդ բառը ընդհանուր հակական մի բառ է որ մենք պարտաւոր լինէինք հասկանալու աչպէս, ինչպէս «Արձագանքն» է հասկացել: Իսկ երկրորդ՝ ամեն խմբագրութիւն հարուստ չէ աչնպիսի խմբագիրներով և աշխատակիցներով, որոնք բոլոր բարբառների կասկածելի խօսքերը «Արձագանք»-ի պէս լաւ ըմբռնէին: Ամեն մի խմբագրութիւն մի որ և իցէ բանով հարուստ է: Թող «Արձագանք»-ը պարծենալ իւր արդ հարստութիւնով... մենք նրան չենք նախանձուս:

**ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ** մի ընդարձակ ֆրանսերէն լօղած է տպել հակական մի-ֆոլգրափի մասին՝ վերնագրով *Notes sur la Mythologie arménienne*: Մեզ ուղարկած է արդ լօղածը իբր արտատպւածք մի ամսագրից (էջ 822—845), որի անունը լիշատակած չէ: Արդ հետաքրքրական լօղածի մէջ տեսութեան են առնուում հակական աւանդութիւնները այս բաների մասին՝ Արև, Լուսնկա, Աստղ, Աղբիւր, Եփրատ, Սրբազան ծառեր, Վիշապ, Հների պաշտամունքներ, Գիշերմուտ, Ալեքսանդր Մեծի աղջիկը, Կախարդութիւն, Վեցհազարեակ գիրքը, Դներ, Գերնդազ, (Տեսաւնընդառաջ), Եռաթիկ, Կուճուկ, Երևոտ, Խոնջոլոզ:

Յօղածի եզրակացութիւնը այս է. «Հարց զիւցաբանութեան մասին կարելի է ասել նոյնը ինչ սլաւոնականի մասին նա պարունակում է նման տարրեր, ինչպիսիք կան հնդկա-երոպական աչն ազգերի զիւցաբանութիւնների մէջ, որոնց հետ չիւել են Հալբը, աչն է՝ Հնդկաստանցոց, Պարսից, Յոնների և ալլն, թերես նաև հնդկա-երոպական գերդաստանից դուրս ազգերի, ինչպիսիք են Ֆրիսներ և ալլն»:

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ** պ. Կլար-Ֆորդի տեղ՝ նշանակւած է Ֆրիլայ Կէրրի: 1876 թւականին նա ուղեկցեց լորդ Սոլսբրիին Կ. Պոլիս՝ արդ քաղաքում կապացած կոնֆերենցիալին մասնակցելու համար, իսկ 1878-ին՝ Բերլինի կոնգրէսին մասնակցելու համար: Իսկ Կլար-Ֆորդը որի մասին մենք լիշատակութիւն արեցինք անցեալ հոմարում տպւած «Տաճկա-Հակական խնդիր» լօղածում, անգլիական ղեկավարի պաշտօնով տեղափոխւած է Հոտո:

**ԱՐՄԷՆ ԱՐԵՂԱՅ ՂԱՏՃԱՆ** նշանակւած է Թիֆլիսի թեմի եկեղեցական հաշիւների քննիչ և էջիմրածնապատկան ապառիկ դրամների պահանջող: Յալժմ չըջել է արդ դործով Ախալխալի գրեթէ

ամբողջ վիճակը: Բարեշնորհ արեղան մի քանի վիճակալին գործերից մնացել է խիստ դժգոհ:

Օգտուում ենք դէպքից լուսաբանելու պատեղ մի խնդրի, որին քննիչի թշնամիները ձգտեցին և այժմ էլ ջանում են այլ կերպարանք տալ, դոցա բերան «Նոր-Գարի» միջոցով: Այս թերթը հրատարակել էր մի սենսացիոնական լուր, իբր վերադառնալ արեղան Ախալցխայի մի ժամկոչի սպանել էր, իսկ լետու թէ՛ ժամկոչը մեռած չէ, այլ սաստիկ վիրավորած հիւանդ պարկած է, այգա թէ արեղան դատի է կանչւած հաշտարար դատաւորի մօտ և այլն: Այս բոլոր աղմուկը, բանից դուրս է գալիս՝ վրէժխնդուութեան գործ է, լիշեալ արեղակին անուանարկ անելու համար:

ԱՐՁԱՆ ՌԱՅԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՆԻՆ: Մենք մտացանք հետեւեալ նամակը պ. Գրիգոր Չալխուշեանից.

22 օգոստոսի 1892 թ. մեր անմահ և մեծ բանաստեղծ Գամառ-Բաթրիպան (Ռ. Պատկանեանը) վախճանեց Նոր-Նախիջևանում. հանգուցեալի որբերի հողաբարձո՞ւները, ցանկանալով մահարձան կանգնեցնել ազգային երգչի գերեզմանի վերայ Ս. Խաչ վանքի գաւթում, լանձնել են ինձ գլուխ բերելու այդ ազգային գործը:

Դիմելով Ձեզ, լիպուք եմ, պարոն, որ դուք չէք զլանալ մասնակցել այդ ձեռնարկութեան թէ Ձեր անձնական նւիրատութեամբ և թէ ուրիշներին հրաւիրելով այդ գործին նպաստելու:

Ազգի լուման թող կանգնեցնէ մահարձան նորան, որը ողջ կեանքը, 62 սարի, անձնանէր ծառայութիւն է ծառայել ազգային խորանի առաջ:

Նւիրողների ցուցակը պարբերաբար տպւելու է թէ հայ թէ ուր լրագիրների էջերում:

Երդեւալ հաւատարմատար Գր. Չալխուշեան:

P. S. Նւէրները խնդրում ենք հասցնել հետեւեալ հասցեով՝ Нахичевань на Дону. Присяжному повѣренному Григорію Христафоровичу Чалхушьяву.

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ Կովկասում: Ընկերութեան կենտրոնը (Թիֆլիսում) ունեցաւ ընդհանուր ժողով դեկտ. 25-ին, ուր ներկայացւեց տպագր. Տեղեկագիրը 1892 թ. համար և քննեց Խորհրդի և լանձնաժողովի ծրագիրները հիմնելիք Գրադարանի համար: Այդ քննութիւնը մնաց շարունակելի. իսկ ինչ վերաբերում է Տեղեկագրին, ժողովի վրայ վերին աստիճան

նի անախորժ տպաւորութիւն թողցց հաշիւներից ոմանց շատ անփութ տպագրութիւնը, որի պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է Խորհրդի, բայց մանաւանդ Խորհրդի նախագահ պ. Ալէքսանդր Անանեանցի և քարտուղար պ. Համբարձում Առաքելեանցի վրայ, որոնց անուանները տպւած են Տեղեկագրի ճակատին:

ՆԵՐՔԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ Նորից սկսել է զբաղեցնել ուսաց մալրաքաղաքեան լրագիրներին, որոնք այս անգամ պնդում են թէ խնդիրը պէտք է դրական մտքով վճռել, այսինքն որ պետութիւնը պէտք է իւր ձեռքն առնէ ներքին գաղթականութեան գործը: Մեզ համար այդ բուն ուսական խնդիրը ունի մեծ կարևորութիւն ահա ինչ պատճառով: Առհասարակ Ռուսաստանի թերթերը երբ խօսում են ներքին գաղթականութեան մասին, զխաւտրապէս ՚ի նկատի ունեն Սիբիրը և Ամուրի երկիրը: Մալրաքաղաքների (Պետերբուրգի և Մոսկուայի) լրագիրների մէջ այդ բանում առանձին գիրք է բռնում «Виржевыя Вѣдомости» (Բիրժէւըլեա վեդոմոստի—Բորսայի լրագիր) օրագիրը որը պահանջում է որ ներքին գաղթականութիւնը, պետութեան օգնութեամբ, շահամանափակի լիշեալ երկիրներով, ալ որ նա տեղի ունենալ առհասարակ զէպի աչնպիսի տեղեր ևս, ուր ոչ ուս բնակութիւն կայ:

Մեր տեղական թերթերից «Кавказъ» (Կաւկազ) լրագիրը բռնում է «Բիրժեւըլեա վեդոմոստի» լրագրի կողմը և Кавказъ 1893 ղեկտ. 15 № 332 լատկապէս մատնանիշ է լինում Անդրկովկասի վրայ, որը, թէև բնակեցրած երկիր է, բայց, Կաւկազ լրագրի կարծիքով, աչնու ամենալիւ պէտք է բնակեցնել ուս գաղթակ աններով: Իբր պատճառ նա բերում է այն հանգամանքը թէ «Русскій элементъ здѣсь слишкомъ слабъ и ничтоженъ, чтобы онъ могъ въ значительной степени содѣйствовать культурному объединенію этой окраины съ Россіей» (Ռուսական տարրը ակտեղ շատ է թուլ և աննշան, որպէս զի նա կարողանար նշանաւոր չափով աշակցել այս երկրի քաղաքակրթական մութեանը Ռուսաստանի հետ): «Կաւկազը» ցաւում է որ Անդրկովկասի հինգ միլիոն աղքատ բնակութեան մէջ ուսները թուով միայն 85,000 են:

«Կաւկազը»-ը վրդովւած է այն իրողութիւնից, որ, Կարսի շրջանը նաւեկուց լետոյ, դուրս գաղթած 100,000 տաճիկների փոխարէն՝ Թուրքիայից եկած լոյները 65 գիւղ են բռնել, հա-

վերը 26 գիւղ, քիւրդ-եղիդները 14 գիւղ, իսկ՝ ռուսները մի աւելն 22 գիւղ (4 գիւղ ուղղափառ և 18 ռուս աղանդաւորների գիւղեր)։ Վրդոված է «Վաւկազ»-ը նաև այն բանից որ 1886-ից մինչ 1892 թւականը Ղարաի շրջանում հաստատուել են մի աւելն երկու հազար հողի այն բոլոր 27,000 հողուց, որ եկել են Ռուսաստանից և հաստատուել Անդրկովկասում նորն նօթնամնալ շրջանում։

Բայց, չնայած որ ռուսական թերթը զարմանում է այդ ամենի վրայ, այնուամենայնիւ նա հարկ է համարում հանգըստացնել մեզ լայններով, որ „ОТНЮДЬ НЕ ИМѢЕМЪ ВЪ ВИДУ СТѢСНЯТЬ ТУЗЕМНОЕ НАСЕЛЕНИЕ“ (բնաւ նկատի չունինք նեղացնել բնիկ ժողովուրդը)։

Եւ որպէս զի բնիկ ժողովուրդը նեղութիւն չզգալ ռուս գաղթականներից, «Վաւկազ» լրագիրը առաջարկում է, հետեւելով Գերմանիայի քաղաքականութեանը լեհաբնակ Պոզնանի նկատմամբ, ստեղծել մի գաղթականական լանձնաժողով, որպէս զի սա նախապատրաստի Մուղանի, Շիրազի, Ղարաեազի լայնածաւալ դաշտերը՝ ռուս գաղթականներով բնակեցնելու համար...

«ՄՈՒՐՃ»-Ի ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ 1889—93: «Մուրճ»-ի հնգամնալ տարե-շրջանը լրացած լինելու առիթով՝ մենք պատրաստում ենք մի բորչիւր, ուր որոշ սխտեմով ցուցակագրած կը լինեն մինչ այժմ «Մուրճ»-ի մէջ լոյս տեսած բոլոր գրածքներին վերնագիրները։ «Մուրճ»-ի նիւթերի այդ ցանկը մենք կ'ուղարկինք մեր բոլոր նոր բաժանորդներին, իսկ հատով ցանկացողներին կը վաճառուի 10 կոպէկով։

Պ. ԽԱԺԱԿՆԵԱՆԻ ԹՕԴԻԱՆԸ «Նաւթաշրջանի բանւորները» վերջանում է ներկայ համարում, սկսած լինելով անցեալ 1892 թւականի 10-րդ №-ում։ Ամբողջը տպւեց ութ համարում։ Անշուշտ մենք շատ ուրախ կը լինէինք, եթէ հնար ունենայինք աղպիսի մեծ աշխատութիւններ աւելի կարճ ժամանակում տպագրել, բայց աւելի ևս ուրախ կը լինէինք, եթէ մեր հալկական հասարակութիւնը բաւականաչափ հասուն լինէր, որ նորան լրջօրէն հետաքրքրէին այդ և դորա պէս աշխատութիւնների մէջ շօշափած խնդիրները։ Մեր հասարակութեան զարգացման աստիճանը, դեռ այնպէս է որ աղպիսի լօղածներով ոչ թէ բաւականութիւն է տրուում նորա իսկական պահանջին, ոչ թէ պատասխան է տրուում իւր մէջ զղացած հարցերին, այլ ընդհակառակը՝ աղպիսի լօղածներով մեր հաւարակութեան մի

ստեար մասը դեռ միայն նոր-նոր իմանում է թէ աղպիսի խնդիրները ևս կան: Գիտենք որ շաղոթորթական չեն աղ- խոսքերը մեր հասարակութեան համար, բայց ճշմարտու- թիւն է աղ: Աղ և միայն աղ տեսակէտից մի աղպիսի մեծ աշխատութեան տպագրութիւնը շուտով վերջացնելը մի ամսա- գրում իւր նպատակին աւելի քիչ կը ծառայէր, քան մաս-մաս, աւելի երկար ժամանակի ընթացքում, ընթերցողների առաջ ներկայացնելը: Եւ ահա ինչու մենք կարծում ենք որ աղ լօղ- ւածի օգտին ենք աշխատել վարելով այնպէս, ինչպէս արել ենք:

Այս ասելուց չետ մենք չենք ուզում մեզ համար պահել մեր զգացմունքը, լայտնելով որ պ. Խաթակնեանի լօղւածը մի վերին աստիճանի մխիթարական երևոյթ է մեր գրականու- թեան մէջ, արժանի որ օրինակ ծառայէ մեր նորագոյն գրա- դէաներին՝ իբր բարեխիղճ վերաբերութիւն դէպի ուսումնա- սիրելի առարկան. զգացմունքի հետ կից մենք գտնում ենք աղ տեղ ցանկութիւն՝ իսկական կեանք նկարագրել և բաւա- կանաչափ պատրաստութիւն՝ բազմակողմանի դիտողութիւն- ների համար:

**ՀՐԱԲԻԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ:** Դեկտ. 8-ին երեկոյեան, Թիֆլիս-Բաքու երկա- թուղու Պետա կալարանին մօտ տարածութեան վրայ, Բող-դաղ կոչւած հանգած հրաբխային սաբից նորից ժայթքում եղաւ: Երևեցած բոցը լուսաւորեց ամբողջ շրջակայքը Բաքու քաղա- քից մինչ Սանդաշալի կալարանը: Առաջին բոցը երևաց երե- կոյեան 8 ժամին 1 րոպէ և տևեց մինչ 8 ժամ և 24 րոպէ, երբ միայն ստորերկրեայ ձաշն էր լսոււմ և երբեմնակի ծուխ էր ելնում: Ժամ 8 և 30 րոպէին նորից լուսավառեց զազաթը և տևեց 3 րոպէ:

Տեղական ծառայողների ասելով՝ հրաբուխը վերջին ան- գամ ժայթքել էր 1888 թ. սեւելով ընդհատումներով երեք ժամ:

Աղ առիթով «կամպաղ» լրագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները հրաբխային ժայթքումների մասին Բազուչ շրջակայքում: Ֆ. Կլոտենցկու տեղեկութիւններով 1823-ից մինչ 1888 թ. աղպիսի ժայթքումներ եղել են 8 անգամ, աչն է՝ 3 անգամ Բող-դաղ լեռան վրայ 1827-ին, 1839 ին և 1888 ին, աթմ էլ 1893-ին, Բաքուից 15 վերստ հեռու, 2 անգամ Կիօ- Վրակի բլրի վրայ Բաքուից 12 վերստ հեռու, 1830 և 1853 թ., 1 անգամ Օթման-Բոս բլրի վրայ, Բաքուից 30 վերստ հեռու, 1854-ին՝ 1 անգամ Բուլլա կղզու վրայ (1857-ին), 1 անգամ Դելանդին հրանդանի վրայ 1861 թ.:

† ԳՐԻԿՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆ, Դեկտ. 10-ին վախճանւեց Գրիգորիս արքեպ. Աղուանեան, Ջուլֆի կալարանում, իւր ուղեւորութեան միջոցին էջմիածնից զէպի Թաւրիզ, ուր նա գնում էր իւր լատիւութեամբ իբր նոր նշանակւած առաջնորդ Ատրպա տականի թեմի:

† ՂԱՀՐԱՄԱՆ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ, Դեկտեմբերի 10-ին Երևանում վախճանւեց Ղահրաման Մելիք-Աղամալեան, Հանգուցեալը վաստակել էր Երևանեան ամբողջ նահանգի առաջին մարդու համբաւը, շնորհիւ իւր բնատուր խելքի, բարք ու վարքի, շիտակութեան, սովուն գործունէութեան, անաչառութեան, հալեացքները լաչնութեան, առնական անցեալի և աղ ամենի հետ կապւած հասարակական հաստատ դիրքի:

Հանգուցեալի հալրը Մելիք-Սահակն էր, որը քսանական թւականներին մեծ դեր է կատարել ուսուպարսկական շարաբերութիւնների մէջ, Սահակի աղջիկը պսակւած էր վրաց թագաւորացն Իրակլիի որդի Ալեքսանդրի հետ: Ղահրամանը Մելիք-Սահակի միակ արու զաւակն էր և ծնւել էր 1820 թ.: Ստացաւ միաջն տնակն ուսում, մտաւ պետական ծառայութեան մէջ 1838-ին թիֆլիսի գանձարանական (կազմօննի) պալատում իբր կանցեւարական ծառայող, ապա շուտով առաջացաւ, ծառայելով կառավարչական ասպարիզում գլխաւորապէս Երևանի նահանգում, իբր գաւառապետի օգնական, ապա գաւառապետ, նահանգական վարչութեան խորհրդական և ապա նախագահ Երևան քաղաքի քրէական և քաղաքացիական պալատի 60-ական թւականներին նա մասնակցեց կողմասում դատարանական ընթացում մտցնելու ծրագրի կազմելուն, և երբ նոր դատարանը ներմուծւեց՝ նա նշանակւեց նախագահ նահանգական դատարանի: Այդ պաշտօնում նա մնաց մինչև 1888 թականը: Չնայած որ նա մտանալէսիրաւաբանական կրթութիւն չէր ստացել, նա անուամենայնիւ հեղինակաւոր էր դատական խնդիրներում ամբողջ կողմասում: Բաղմաթիւ երկտասարդ իրաւագէտներ անցել են հանգուցեալի գործնական շիլան, ծառայելով նորա աւագութեան ներքոյ:

Հանգուցեալը 1884-ին և 1885-ին ընտրւեց Երևանեան թեմից պատգամաւոր կաթողիկոսական ընտրութիւնների համար, բաց մասնակցեց միաջն 1884-ին, նպատակելով Ներսէս վարժապետեանի ընտրութեանը: Վերջին տարիներս նա գրեթէ կուրացած էր և աւելի անկողնին էր ծառայում: Նա վախճանւեց 73 տարեկան հասակում:

† ՅԵԼԻԻՔՍ ՆՆԻ հայերէնագէտը վախճանեց 77 տարեկան հասակում (ծնւած էր 1814-ին)։ Հանգուցեալի մասին պէտք է կարդալ հանգուցեալ Գ. Ա. Շոռմֆի լոգւածները հայերէն ուսմունքների մասին Եւրոպայում, «Մուրճ» 1892 թ.

† ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿԱԶՔԷԳ. Դեկտեմբերի 10-ին վախճանեց թիֆլիսի Միքալէլեան հիւանդանոցում վրաց տաղանդաւոր բանաստեղծ-վիպասան Ալեքսանդր Միքալէլեան Կազբէգ, գրականութեան մէջ աւելի չպտնի Մոչխուբարիձէ անունով։ Կազբէգի կեանքը ներկայացնում է շատ ողբերգական փոփոխութիւններ։ Նորահայրը գեներալ էր և հարուստ մարդ, աչնպէս որ նա մեծացել էր լիութեան մէջ, բայց հօր մահից չտող նա չանկարծ չքաւորութեան մէջ ընկաւ։ Բայց Կազբէգը այլ գործ չէր ձանաչում քան գեղարեստը և գրականութիւնը, որոնք նորան ապահովել չէին կարող։ Սկզբում նա նւիրւած էր վրաց թատրոնին, որի համար նա մեծ քանակութեամբ թարգմանութիւններ արաւ, ապա նաև գրեց ինքնուրոյն դրամաներ—ժողովրդական դրամա «Արսէն» և բարձրագրական տեսարաններ՝ «Մեր դասախարակները»։ Դոցանից «Արսէնը» մինչ արժ մէջ պահպանւում է վրաց թատրոնական ռեպերտուարի մէջ։ Թատրոնին ծառայում էր նաև ոտանաւորներ տրտասանելով և իբր դերասան, իբր թեփափոր, կառավարիչ և այլն։

Բայց Կազբէգի տաղանդը փալցեց մանաւանդ վիպասանութեան մէջ, աշխատակցելով 1880—85 թւականներին վրաց «Դրոներ» (Ժամանակ) օրագրում և Նախկին «Իւերիա» (Վրաստան) ամսագրում։ Իւր վէպերով նա իւր վրաց դարձրեց ամբողջ վրաց ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը, չնայած որ աշխատում էր ամենադառն հանգամանքներում, շատ անգամ քաղցած և գրեթէ միշտ հիւանդոտ։ Նորա առաջին վէպն էր «Ելգուջա», որով և սկսեց երիտասարդ վիպասանի փառքը։ Նորահայր գործունէութիւնը տեղը ընդամենը 5—6 տարի, որից չտող սկսեցին ոգեկան հիւանդութեան նշաններ երևալ ինքը մնալով բոլորովին անօգնական։ Նա տարեկան հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժինը, ուր նա երեք տարի մնալով վախճանեց։

Կազբէգը մեծ ժողովրդականութիւն է վայելում Վրաստանում։ Բայց իւր կենդանութեան օրօք, եթէ չլինէր նորահոգեկան հիւանդութիւնը՝ նա մի այլ միսիթարութիւն զգացած կը լինէր, տեսնելով որ ինքը մի կուան է ծառայել հայերի և վրացիների փոխադարձ ծանօթութեան գործում։ Մտ երկու

տարի առաջ «Մուրճ»-ում երեսաց կազմի «Էլիս» խորագրով գեղեցիկ պատմածքը լեռնացիների կեանքից, որին պիտի լաջորդէր «Էլզուջան», բայց մինչև այդ վերջինս «Մուրճ»-ում սկսելը՝ Հաւոց Հրատ. Ընկերութիւնը, առանց մեզ նախագրուշացնելու, հրատարակեց այդ գրածքը:

Կազմէզը ինքը լեռնացի էր, և նորա վիպական գրած. ւածքները լեռնական կեանքիցն են:

Կազմէզի լուղարկաւորութեան հանդէսը կատարեց թիֆլիսում փառաւոր կերպով: Մարմինը թիֆլիսից տեղափոխեց կաղէզ գիւղը, Կովկասի մեծ լեռնաշղթայում, թիֆլիսի սահմանի մօտ. դազաղի վրա՛ ճաւեր արտասանեցին. խօսողների մէջ մենք նկատեցինք՝ Գ. Մերեթեւուն և Իշխ. Ակակի Մերեթեւուն:

ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԸ ճիշտ դեկտ. 31-ին դուրս բերելու համար՝ ստիպւած եղանք մի քանի պատրաստի նիւթեր բաց թողնել:

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ԳՈՒԶԱՐԵԱՆՅ, Գրիգոր.—«Մեղապարտ Հրէշներ», դրամա չորս գործողութեամբ: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1894 թ. գինն է 30 կոպ.:
- 2) ՆՈՅՆԸ.—«Բանտերը և նոցա բնակիչները» — Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893 թ., գինն է 20 կոպ.:
- 3) «ԱՐՕՐԻ ՕՐԱՑՈՅՑ» պատկերազարդ, 1894 թ. համար: Բագու, տպ. Աբօր, 1893 թ. գինն է 1 ռուբ.:
- 4) ՄԻԱԲԱՆ.—«Նստոց» (արտատպած «Արարատ» ամսագրից):
- 5) ՄԻԱԲԱՆ.—«Ուրարտեան բնեւագրերի լեզուն»: Վաղարշապատ, տպ. Մալր-Աթոռի, 1893 թ. (արտատպած «Արարատ» ամսագրից):
- 6) ՌԵԿԼԻԻՅ, Էլիզէ.—Լաղիստան, Հալաստան և Քուրդիստան. թարգմ. Միարանի (արտատպած «Արարատ» ամսագրից): Էջմիածին տպ. Մալր-Աթոռի. գինն է 50 կոպ.:
- 7) ՕՐԱՑՈՅՑ 1894 թ., տպագրութիւն Ա. Էջմիածնի: